«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Դերային խաղի զարգացման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում

Դաստիարակ՝ Անժելա Ղուկասյան
Մանկապարտեզ՝ Սևանի թիվ 4 «Գալիք» ՀՈԱԿ

2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ---------- 3

Գլուխ 1. Դերային խաղերի նշանակությունը երեխայի զարգացման գործում --- 5

1.1. Դերային խաղի կառուցվածքը ---------- 7

Գլուխ 2. Հետազոտական աշխատանքի ընթացքը ---------- 9

2.1. Հետազոտական աշխատանքի կառուցվածքը ---------- 10

2.2. Դիտարկումներ և վերլուծություններ ---------- 12

Եզրակացություն ---------- 13

Գրականության ցանկ և օգտագործված աղբյուրներ ---------- 14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական տարիքը բնութագրվում է զարգացման յուրահատուկ առանձնահատկություններով և օրինաչափություններով։ Այն համարվում է խաղի տարիք։ Խաղի ընթացքում ձևավորվում է երեխայի «Ես»-ը, զարգանում են հոգեկան գործընթացները, լուծվում են դաստիարակչական մի շարք խնդիրներ։ Հետևաբար, խաղը դառնում է մանկության պարտադիր ուղեկիցը։

Մակարենկոյի կարծիքով. «Խաղը փոքրերի համար ունի այնպիսի կարևոր նշանակություն, ինչպես մեծերի համար իրենց ծավալած գործունեությունը, աշխատանքը։ Ինչպիսին երեխան իրեն դրսևորում է խաղի ընթացքում, հավանաբար, այդպիսին էլ նա կլինի երբ մեծանա»։[1]

Այսպես է բնութագրել խաղը նաև Վ. Ա. Սուխումլինսկին. «Երեխայի համար խաղն ամենալուրջ գործն է։ Խաղի ժամանակ երեխայի առջև բացահայտվում է աշխարհը, բացվում են անձի ստեղծագործական ունակությունները։ Առանց խաղի չկա և չի կարող լինել լիարժեք մտավոր զարգացում»։[2]

Ստեղծված են բազմաթիվ խաղեր, որոնք ուղղված են ֆիզիկական դաստիարակության, մտավոր ունակությունների և սենսորային ապարատի զարգացման համար։ Բոլոր այս խաղերը հորինված են մեծահասակների կողմից՝ երեխաների ուսումնառության ընթացքն ավելի հետաքրքիր և զվարճալի դարձնելու համար։

Ժ. Ժ. Ռուսսոն ասել է. «Երեխան պարապում է, թե զվարճանում, նրա համար հավասարարժեք գործողություն է։ Նրա խաղերը նրա պարապմունքներն են։ Նա չի զգում խաղի և պարապմունքի տարբերությունը»։[3]

Հետազոտական աշխատանքի համար ընտրվել է «Դերային խաղերի զարգացման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում թեման, քանի որ նախադպրոցական տարիքին ամենաբնորոշ խաղը դերային խաղն է, որում սոցիալական հարաբերությունները կամ նյութական առարկաները ստեղծագործաբար վերարտադրվում են երեխաների կողմից կյանքի կամ գեղարվեստական

1. Р. И. Жуковская «Творческие ролевые игры в детском саду» 1960г էջ 3-5
2. Վ. Ա. Սուխումլինսկի «Սիրտս նվիրում եմ երեխաներին» 1969թ էջ 64
3. Ж. Ж. Руссо «Эмил, или о воспитании /2 том» 1981г էջ 183

ստեղծագործությունների տպավորությունների հիման վրա, ինքնուրույն կամ մեծահասակների օգնությամբ։

Հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել երեխաների՝

- ինքնուրույն դրսևորվելու կարողությունը և հմտությունների ձևավորումը
- ստեղծագործական երևակայության ունակությունների դրսեվորումը
- ինքնուրույն աշխատելու և արտահայտվելու կարողությունը
- ինքնահաստատման և ինքնադրսևորման կարողությունը։

Այս բոլոր հոգեբանական ու դաստիարակչական խնդիրներին են անդրադարձել նաև Ն. Կ. Կրուպսկայան, Ա. Ն. Լեոնտևը, Կ. Դ. Ուշինսկին և այլոք։

Հետազոտական աշխատանքը բաղկացած է հետևյալ բաժիններից՝

- Ներածություն
- Գլուխ 1. Դերային խաղերի նշանակությունը երեխայի զարգացման գործում
- 1.1. Դերային խաղերի կառուցվածքը
- Գլուխ 2. Հետազոտական աշխատանքի ընթացքը
- 2.1. Հետազոտական աշխատանքի կառուցվածքը
- 2.2. Դիտարկումներ և վերլուծություններ
- Եզրակացություն

Դրանց մեջ մանրամասն ներկայացված են մանկավարժների և տեսաբանների մի քանի կարծիքներ, դերային խաղերի առանձնահատկություններն ու կարևորությունը երեխայի կյանքում, պլան - կոնսպեկտ, նկարներ։

Հետազոտության մեջ ներառված են նաև տնօրենի, մեթոդիստի և հոգեբանի կարծիքները, իսկ եզրակացության բաժնում գրված է իմ տեսակետը։ Հետազոտական աշխատանքները ամփոփվել են բովանդակությամբ և գրականության ցանկով։

Գլուխ 1. ԴԵՐԱՅԻՆ ԽԱՂԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

«Խաղը կայծ է, որ հարցասիրության և հետաքրքրասիրության կրակ է վառում»։ Այսպես է բնութագրել խաղի կարևորությունը Վ. Ա. Սուխումլինսկին։[1]

Խաղը երեխային հնարավորություն է ընձեռում մտնել իր համար անմատչելի իրավիճակների մեջ։ Դրանում միաժամանակ նա կարող է հանդես գալ և՛ դրամատուրգի, և՛ դերասանի դերում։ Երեխան դերասանի պես երկար չի պատրաստվում դերակատարմանը և մտահղացումը ավարտին չի հասցնում։ Նա ուղղակի խաղում է՝ արտահայտելով սեփական մտքերն ու զգացմունքները, երազանքներն ու ձգտումները, որոնցով նա համակվում է տվյալ պահին։ Նա ձեռք է բերում իրական ու հարուստ փորձ, որը այլ կերպ հնարավոր չէր յուրացնել։ Խաղը հանդես է գալիս որպես յուրահատուկ փոխհատուցման միջոց, որով նա կբացահայտի իր հնարավորությունները և կհասնի լուրջ հաջողությունների։ Դա նյարդային խանգարումների, անվստահության և անհաջողակ լինելու զգացողություններից ազատվելու հիանալի միջոց է։

Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և աշխարհընկալման գործում մեծ նշանակություն ունեն դերային խաղերը։ Դրանք երեխաներին սովորեցնում են սեփական գործողություններն ու մտքերը ծառայեցնել կոնկրետ նպատակի՝ ձևավորելով ավելի նպատակասլաց անհատներ։ Դերային խաղերը իրենց ծագումով և բնույթով սոցիալական են, կրում են ազգային, ժողովրդական բնույթ և փոխանցվում սերնդեսերունդ։ Դրանցում ձևավորվում և դրսևորվում է աշխարհը ճանաչելու, նրա վրա ներգործելու երեխայի պահանջը, զարգանում են նրա կամային և ֆիզիկական հատկությունները։ Երեխաների դաստիարակության գործում դերային խաղերի դերը կայանում է նրանում, որ երեխաները՝ մեծահասակի դերում գտնվելով, գործում են որոշակի կանոններով և յուրացնում են այդ կանոնները, որոնք արտահայտում են մարդկանց հարաբերությունները հասարակության մեջ։ Երեխաների խաղերի բովանդակության վրա մեծ ազդեցություն ունեն ընտանիքի անդամները և հասարակությունը, այսինքն՝ այն պայմանները, որտեղ ապրում է երեխան, այն մտքերը,

1. Նախաշավիղ գիտամեթոդական հանդես /5-6. 2007 էջ 88

զգացմունքները, գիտելիքները, որոնք երեխան յուրացնում է մեծերի հետ շփվելու ընթացքում։

Դերային խաղի առաջնային գիծ է հանդիսանում խաղի բնույթի ինքնուրույնությունը։ Երեխաների՝ մեծերին նմանակելու ձգտումը լավ բացատրում է Ա. Ն. Լեոնտևը իր «Նախադպրոցական խաղերի հոգեբանական հիմքերը» աշխատության մեջ։ «Ես կարող եմ»,«Ես ինքնուրույն կանեմ» այս արտահայտությունները խաղի ընթացքում երեխաներին դրդում են ինքնուրույնության՝ նմանակելով մեծահասակին, ում դերը որ այդ պահին նրանք խաղում են։

Որոշ հոգեբանների կարծիքով դերային խաղը երեխային նախապատրաստում է կյանքին։ Երբ երեխան խաղում է, կարծես ինքն իրեն պատկերացնում է այդ վիճակում։

Ն. Կ. Կրուպսկայան մեծ նշանակություն է տալիս երեխայի վրա այն միջավայրի ազդեցությանը, որի մեջ դաստիարակվում և զարգանում է երեխան՝ հաշվի առնելով երեխայի անհատականությունը։ Նա կարծում է, որ երեխան կարիք ունի, որ իրեն ուղղորդեն, ավելացնեն իր գիտելիքները, սովորեցնեն աշխատել, զարգացնել գեղագիտական ընկալումները, քանի որ միայն այս հիմքի վրա երեխան կարող է ձևավորել ինքնուրույնություն, ստեղծագործելու ունակություններ։[1]

1. Р. И. Жуковская «Творческие ролевые игры в детском саду» 1960г էջ 3-5

1.1. ԴԵՐԱՅԻՆ ԽԱՂԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Դերային խաղերը բաղկացած են սյուժեից, բովանդակությունից, դերերից։

Սյուժեն իրականության մի ոլորտ է, որը վերարտադրվում է երեխաների կողմից՝ արտացոլելով որոշակի գործողություններ ուրիշների կյանքից և գործունեությունից։ Խաղի սյուժեն անկայուն է, փոփոխական, երբեմն՝ անտրամաբանական։ Ինչքան փոխվում են երեխայի հայացքները, այնքան էլ երեխան փոխում է խաղի սյուժեն։ Երեխայի համար դերային խաղերն ունեն ավանդական սյուժետ՝ խանութ, հիվանդանոց, դպրոց և այլն։ Նման խաղերը խաղում են բոլոր սերունդները՝ ավելացնելով նրանց տարբեր բովանդակություններ։ Խաղի բովանդակության վերաբերմունքը փոխանցվում է մասնակիցներին։

Մարդկանց հարաբերությունները իրար նկատմամբ շատ են հուզում երեխաներին։ Դերային խաղի մեջ՝ փորձելով կրկնել այն ամենը, ինչ նրանք տեսել ու լսել են՝ երեխաները իրենց վրա են վերցնում այս կամ այն դերը։

Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը ասել է. «Մանկությունը մարդու կյանքի էն ամենաընդունակ շրջանն է, երբ չորս կողմից ընդունում է, սնունդ է առնում ու զարգանում շարունակ։ Խաղը մանուկ մարդու բնական, օրգանական պահանջն է, նրա լրջությունն է, նրա էությունը։ Խաղում է նրա մատաղ կյանքի ամեն մի մասնիկը ու կյանքում նա ամեն բանի խաղով է մոտենում։ Խաղով է քնում, խաղով է ճանաչում ու ընդունում։ Դա նրա ձևն է, նրա մեթոդն է...»։ [1]

Երեխան՝ խաղալով դերը, ինքն իրեն նույնացնում է սյուժեի ցանկացած կերպարի հետ և գործում է այդ կերպարի մասին պատկերացումներին համապատասխան։

Ինչքան մեծանում է երեխան, այնքան բարդ են դառնում դերային խաղերը։ Մեծանալով, նախադպրոցականները սովորում են պայմանավորվել և պլանավորել խաղը։ Ոչ բոլոր երեխաները հակվածություն ունեն դերային խաղի։ Եթե երեխան ամաչկոտ է, կարելի է երեխային գրավել դեպի խաղը՝ այն վերածելով թատերական ներկայացման։ Դերախաղերը կարող են ունենալ հստակ կառուցվածք կամ լինել ազատ։ Դերախաղի գրագետ իրականացումը անգնահատելի օգուտ է բերում մասնակիցներին։ Դրանք

1. Ջուլիետա Գյուլամիրյան «Խաղալով սովորենք» էջ 23-24

ցանկալի է անցկացնել պարապմունքի մեջտեղում։ Մեթոդը պետք է կիրառել շատ զգույշ, ցանկալի է, որ խմբերը լինեն փոքր։ Եթե մի խումբը խաղում է, մյուսը լինում է դիտորդ։ Դերախաղը մասնակիցներին հնարավորություն է տալիս հասկանալ, թէ ինչպես են իրենց զգում այլ մարդիկ, երբ առնչվում են ինչ - ինչ իրավիճակների հետ։[1]

1. heqiat.wordpress.com

Գլուխ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԹԱՑՔԸ

Հետազոտական աշխատանքը կազմակերպել եմ Սևան համայնքի թիվ 4 Գալիք մսուր մանկապարտեզի կրտսեր 2-րդ խմբում: Կատարել եմ դիտարկումներ և մասնակցել երեխաների կողմից կազմակերպված սյուժետա – դերային, կառուցողական խաղերին և խաղ – ներկայացումներին (նկ.1):

նկ.1

Բոլոր խաղերի ընթացքում երեխաները ցուցաբերել են կերպարային կեցվածք, դիմախաղ, համապատասխան շարժումներ: Նկատեցի, որ երեխաները խաղի սյուժեն հիմնականում վերցնում են իրենց շրջապատող կյանքից (ընտանիք, տրանսպորտով երթևեկություն, մանկապարտեզ և այլն): Անցկացրել եմ խոսքի զարգացման պարապմունք՝ մասնակից դարձնելով խմբի բոլոր երեխաներին, կիրառելով դերային խաղն իր բոլոր կանոններով: Պարապմունքները պլանավորվում և անցկացվում են՝ հիմք ընդունելով «Մանկապարտեզի կրտսեր 2-րդ խմբի կրթական համալիր» ծրագիրը և «Զարգացման և կրթական տարիքային չափորոշիչները»:

2.1. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թեման՝ Ռուսական ժողովրդական հեքիաթ «Պապն ու շաղգամը»[1]

Տեսակը՝ Մուլտֆիլմի դիտում և խաղ – թատերականացում

Նպատակը՝

- Դիտել և հասկանալ գեղարվեստական գրականության բովանդակությունը։
- Կարողանալ վերարտադրել հեքիաթը, ընդունել կերպարային կեցվածք և նմանվել հեքիաթի հերոսներին։
- Զարգացնել բանավոր խոսքը, հարստացնել բառապաշարը **շաղգամ** և **օգնություն** բառերով։
- Ձևավորել խոսքը արտահայտիչ արտահայտելու կարողություն
- Դաստիարակել միմյանց օգնելու, բարի գործեր կատարելու ցանկություն։
- Դրական վերաբերմունք ձևավորել աշխատանքի նկատմամբ։

Նախապատրաստական մաս՝

Ստեղծել տրամադրող, հեքիաթային միջավայր։ Զրուցել փոխօգնության և համագործակցության մասին։

Անհրաժեշտ նյութեր՝

- Հեքիաթի տեսահոլովակ (նկ.1)
- Հերոսների հագուստներ (նկ.2)
- Հեքիաթի հերոսների պատկերներ (նկ.3)

նկ.1

նկ.2

նկ.3

Ընթացքը՝

Դաստիարակը՝ դիմելով երեխաներին, կատարում է հարցադրումներ.

- Երեխանե՛ր դուք հեքիաթներ սիրու՞մ եք։

1. youtu.be/RHODbvZA0-0

- Ու՞մ եք հանդիպում հեքիաթներում։

Դաստիարակը ներկայացնում է «Պապն ու շաղգամը» հեքիաթը և առաջարկում դիտել այն։ Մուլտֆիլմը դիտելուց հետո կատարվում է խաղ – վարժություն. (նկ.1, նկ.2)

Հողը փորենք ա՛յ այսպես, ա՛յ այսպես,

Սերմը ցանենք ա՛յ այսպես, ա՛յ այսպես,

Հողը ջրենք ա՛յ այսպես, ա՛յ այսպես,

Սերմը ծլեց, մեծացավ,

Տերև – տերև բարձրացավ,

Մի մեծ շաղգամ նա դարձավ։

Դաստիարակը երեխաներին հարցեր է առաջադրում՝ վեր հանելու հեքիաթի բովանդակությունը.

- Ի՞նչ էր ցանել պապը։
- Տարվա ո՞ր եղանակին է ցանել։
- Ինչու՞ պապը չկարողացավ միայնակ հողից հանել շաղգամը։
- Ու՞մ կանչեց օգնության պապը։
- Ու՞մ կանչեց օգնության տատը։
- Ու՞մ կանչեց օգնության շնիկը։
- Ու՞մ կանչեց օգնության փիսիկը։
- Ովքե՞ր օգնեցին պապիկին։
- Տարվա ո՞ր եղանակին պապը կատարեց բերքահավաքը։

Ստեղծելով խաղային իրավիճակ, դաստիարակը առաջարկում է երեխաներին բեմականացնել նախապես դիտված մուլտֆիլմը։ Երեխաները իրենց ցանկությամբ ընտրում են համապատասխան դերերը, իսկ դաստիարակը ստանձնում է հեղինակի դերը (նկ.3)։ Խաղ – թատերականացման ավարտից հետո դաստիարակը խրախուսում է երեխաներին և առաջարկում օրվա 2-րդ կեսին գունավորել շաղգամի գծապատկերը։

նկ.1

նկ.2

նկ.3

2.2. ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պարապմունքին ներկա էին ողջ մանկավարժական անձնակազմը (նկ.1)։ Պարապմունքի քննարկման ընթացքում արտահայտվեցին տնօրենը, մեթոդիստը և հոգեբանը։

նկ.1

Տնօրենի կարծիքով պարապմունքը շատ հետաքրքիր և դիտարժան էր։ Երեխաները սիրով և ուշադրությամբ դիտեցին մուլտֆիլմը և մեծ ոգևորությամբ ու խանդավառությամբ պատասխանեցին առաջադրված բոլոր հարցերին։ Գովելի է, որ պարապմունքին ներգրավված էին բոլոր երեխաները։ Նրանց աշխարհընկալման հորիզոնը ավելի ընդարձակվեց՝ խաղ – թատերականացման միջոցով ծանոթանալով այլ ազգի գեղարվեստական ստեղծագործությանը։

Մեթոդիստի դիտարկմամբ դաստիարակը հասել է իր առջև դրված նպատակներին։ Երեխաների մեջ ձևավորվեց ընկերների հետ համագործակցելու և միմյանց դժվար պահերին օգնելու կարողություն։ Երեխաները առանց կաշկանդվելու հաղորդակցվեցին մեծերի և հասակակիցների հետ և հեշտությամբ ներգրավվեցին իրենց ընտրած դերերի մեջ։ Նաև ավելացրեց, որ պահպանվել է պարապմունքի փուլերի հաջորդականությունը։

Հոգեբանը իր խոսքում նշեց, որ երեխաները միմյանց նկատմամբ դրսևորում էին բարյացակամ վերաբերմունք, բոլորի մոտ նկատվում էր պատասխանատվության զգացում իրենց դերերի նկատմամբ։ Դաստիարակը կարողացավ կենտրոնացնել բոլոր երեխաների ուշադրությունը դեպի մուլտֆիլմը և թատերականացված խաղը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ ավարտելով հետազոտական աշխատանքը, ինձ համար բացահայտեցի, որ երեխաների ընդունակություններն ու կարողությունները ի հայտ բերելու, նրանց ներաշխարհը թափանցելու համար նախադպրոցական տարիքի երեխաների համար կարևոր և անգնահատելի է դերային խաղերի կազմակերպումը և անցկացումը օրվա տարբեր ժամերին: Երեխաների ուսուցման, դաստիարակության, զարգացման պրոցեսը դերային խաղերի շնորհիվ դարձան էլ ավելի զվարճալի և հետաքրքիր, քանի որ նրանք ազատ էին դերերի ընտրության գործում և կարողանում էին ազատ արտահայտել իրենց մտքերը: Դերային խաղերի միջոցով երեխաները դարձան էլ ավելի ինքնուրույն և պատասխանատու:

Իմ առջև դրված բոլոր նպատակները իրականություն դարձան: Երեխաները պարապմունքի ընթացքում ցուցաբերեցին ինքնուրույնություն, պատասխանատվություն իրենց կատարած դերի նկատմամբ: Ճիշտ է, երեխաները փոքր տարիքի են, բայց դա բոլորովին չխանգարեց նրանց ինքնուրույն աշխատելու, դերերը ընտրելու և ստեղծագործական ունակությունները դրսևորելու գործում: Նրանց մեջ ձևավորվեց հաստատակամություն, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու հմտություն, որը շատ կարևոր է հետագայում որպես մարդ կայանալու գործում:

Այս թեմայի շրջանակներում առաջարկում եմ դաստիարակներին հետագա աշխատանքի ընթացքում կիրառել ժամանակակից տեխնիկական միջոցները, որոնց շնորհիվ պարապմունքների թեմաները ավելի մատչելի, հետաքրքիր և հասանելի են դառնում երեխաներին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Р. И. Жуковская «Творческие ролевые игры в детском саду» 1960г էջ 3-5
2. Վ. Ա. Սուխումլինսկի «Սիրտս նվիրում եմ երեխաներին» 1969թ էջ 64
3. Ж. Ж. Руссо «Эмил, или о воспитании /2 том» 1981г էջ 183
4. heqiat.wordpress.com
5. youtu.be/RHODbvZA0-0
6. Ջուլիետա Գյուլամիրյան «Խաղալով սովորենք» էջ 23-24
7. «Մանկապարտեզի կրտսեր 2-րդ խմբի (3-4) տարեկանների կրթական համալիր», Երևան 2011 էջ 138-142